ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՊԷ՞ՏՔ Է ՏՂԱՅ ՈՒ ԱՂՋԻԿ ՄԻԱՍԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԻՆ ԵՒ ՈՒՍԱՆԻՆ*).

Է. ՄՕՅԼԷՍ ԵՒ Է. ԹՈՒԼԻ.

III.

Ո՞ւչափ լայն է տարածված միատեղ ուսուցման սիստեմը Անգլիայում եւ ի՞նչպիսի յաջողութեամբ։

Անգլիան արդէն ունի մի քանի ընդարձակ և ծաղկող միացեալ դպրոցներ։ Սրանցից մի քանիսը հիմնուած են արդէն վաղուց, սակայն միատեղ ուսուցումը մտցրել են միայն յետագայ տարիներում։ Աւելի բազմաթիւ են այն մասնաւոր ճեմարանները, ուր տղայ-աղջիկների միատեղ ուսուցումը մուծուած է հէնց սկզբից։ Այդ կարգի ամենաաչքի ընկնող դպրոցներից մէկն է հանդիսանում Քեզվիքինը, հիմնուած գեղեցիկ լճային վայրի ուղիղ կենդրոնում։ Այս նորամուծման նախաձեռնողն էր Կանոնիկոս Ռաունսլէյը, վարչութեան նախագահը և համոզուած կողմնակիցը միացեալ ուսուցման։ Փորձը բոլորովին յաջող դուրս եկաւ։ Տղաները դպրոցում գրեթէ նոյնքան են, որքան և աղջիկները և դասատուների թուում կան անձ/նք երկու սեռից։ Ցէցիլ Գրանդի կառավարչութեան տակ գտնուած այդ դպրոցը, արժանացել է ամենագովասանական կարծիքի տեղական համալսարանական տեսուչների կողմից։ Այսպէս՝ դոկտոր Վայլզօյլը, յայտնելով, որ ինքը այցելել է այդ դպրոցը «չը տածելով առանձին հետաքրքրութիւն դէպի միատեղ ուսումը և, ի հարկէ, առանց փոքրագոյն կողմնապահութեան», ծայրաստիճան համակրանքով է արտայայտուում, այնտեղ տիրող ոգու և կարգապահութեան մասին։

Դպրոցում կան տարբեր հասակի ուսանողներ, որովհետև մեծերը այնտեղից անմիջապէս մտնում են համալսարան։

Խառն սիստեմը միացեալ ուսուցման այստեղ կրել է բաւական ծանր փորձութիւններ։ Երբ առաջին անգամ ենթադրուում էր բանալ Քէզվիքեան դպրոցի դռները ինչպէս աղջիկների այն-

*) Տես Արարատ, 1914 թ. նոյեմբեր։

պէս և տղաների առաջ, գտնուեցին ոչ փոքրաթիւ մարդիկ, որոնք նախագուշակում էին դրան անխուսափելի անյաջողութիւն և կործանումն։ Շատերը կասկածում, իսկ մի քանիսները դրականօրէն բացասում էին հնարաւորութիւնը՝ պահպանել կանոնաւոր կազմակերպումն և կարգապահութիւնը համայնական դպրոցի այն կօլլեջում, ուր տղաների կողքին կրթուելու էին և աղջիկները։ Սակայն ամենայամառ կասկածամիտներն էլ կարճ միջոցում ստիպուած էին խոստովանել, որ Բէզվիքեան դպրոցը ծաղկում է, նոր սիստեմով այնպէս, ինչպէս դեռ երբէք նրան չէր յաջողել, մինչ այդ ատենը։ Այդ դեռ քիչ է, ըստ միաձայն խոստովանութեան անաչառ ուսումնասիրողների, դպրոցի ոգին չափազանց բարելաւուում էր շնորհիւ այդ փոփոխման և ոչ մի անգամ չէր պատահում և ոչ մի անցանկալի դիպուած, որը կարողանար խաւարել յաջողութիւնը այդ փորձի։

Միատեղ ուսուցման սիստեմն ընդունած բազմաթիւ մասնաւոր դպրոցներից մինք վերցնում ենք Բիդէյլեան դպրոցը, որը կարող է ծառայել իբրև ընորոշ օրինակ։ Բիդէյլեան դպրոցը, թէպէտ մասնաւոր, սակայն չէ իբրև շահագործման ձեռնարկութիւն։ Միատեղ ուսուցման ներմուծումը և մի քանի աղջիկների ընդունումը, իբրև աշակերտուհիներ, սպառնում էին դպրոցին սկզբում լուրջ դրամական կորուստով, որովհետև մի քանի զայրացած ծնողներ շտապեցին սկզբում հանել այնտեղից իրենց տղաներին։ Բարերաղդաբար, դպրոցի վերատեսուչ Բաղէյը հնարաւորութիւն ունէր սպասելու, մինչև որ ակնյայտնի յաջողութիւնը նոր սիստեմի ընկճեց յամառ և անիմաստ կանխակարծիքը, որը գոյութիւն ունէր սկզբում նրա դէմ։ Հետևանքը արդարացրեց նրա սպասելիքները։ Միացեալ ուսուցումը դուրս եկաւ և այստեղ նոյնքան յաջող, որքան և Բէզվիքում, և կարճ միջոցում ուսանողների թիւը Բիդէյլում անցաւ սկզբնականից։ Այդ ժամանակէն նրա յաջողութիւնը անընդհատ աւելի ու աւելի ուռճանում է։

Մենք մտադիր չենք այստեղ հաշիւ տալու այն բազմաթիւ դպրոցների և կօլլեջների մասին, որոնք առաջ եկան վերջին մի քանի տարիներում և որոնք հետևում են տղայ–աղջիկների միացեալ ուսուցման սիստեմին։ Բայց և այնպէս մենք հարկ ենք տեսնում յիշել համեմատաբար ոչ շատուցց հիմնած Այլֆրեդ թագաւորի դպրոցները Համպստեդում, ոչ միայն այն պատճառով, որ մայրաքաղաքին մօտ են, այլ և այն պատճառով, որովհետև միատեղ ուսուցումը այնտեղ առաջ է տարուում բաւական լայն ծաւալով, որպէսզի լրիւ հասկացողութիւն կազմուի այդ սիստեմի առաւելութիւնների մասին։

Այժմ մի ընդհանուր հայեացք քցենք միացեալ ուսման դրդ-

բոցների ամենօրեայ կեանքի վրայ և դրա համար առնենք Բէ-դէյլինը, իբրև ամենաբնորոշողը այդ սիստեմն ընդգրկող բոլոր հիմնարկութիւններից։

Աղջիկ-աշակերտուհիները քնում են բաժան տան մէջ, իրենց առանձին դաստիարակի հսկողութեան տակ, և միանում են տղաներին գլխաւոր շէնքում, նախաճաշից յետոյ ու այնտեղ են մնում օրուայ մեծ մասը։ Աղջիկները ուսանում են ընդհանուր դասարաններում տղաների հետ և մասնակցում են նրանց խաղերի մեծ մասին, բացառութեամբ մրցադնդի։ (футболлъ): Այն ժամերին, երբ տղաները զբաղւում են պարտիզային աշխատանքով և շէնքերի վրայ, աղջիկներին սովորեցնում են կարուձև և տնտեսութիւն։

Սրանից երևում է, որ այստեղ ձգտում չկայ կրթել երկու սեռը բոլորովին միատեսակ։ Նրանց մէջ գոյութիւն ունեցող տարբերութիւնը ընդունւում է բացարձակ և դրանցից իւրաքանչիւրը նախապատրաստւում է այն խնդրի համար, որպիսին նրան վիճակուած է իրագործելու կեանքում։ Իսկապէս, մեծագոյն մոլորութիւն է երևակայել, իբրև թէ միացեալ ուսուցման բոլոր պաշտպանները ցանկանում են տալ կատարեալ միատեսակ ուսմունք ինչպէս տղաներին, նոյնպէս և աղջիկներին։ Այդտեղ ձգտում են հասնել հաւասար և ոչ նոյնատեսակ զարգացման, և գլխաւորապէս ի չիք դարձնելու գոյութիւն ունեցող անօգուտ, անբնական և վերին ծայր ճնաակար անջատումը։

Աղջիկները, բնականից իբրև աւելի զգայուն, աւելի արագ տպաւորութիւններ ներընդունող, բայց պակաս հաստատուն պահողներ, կարօտում են նոյնպէս իրենց եղբայրների ազդեցութեանն ու օրինակին, ինչպէս և եղբայրները նրանց ազդեցութեանը։ Մինչ այս ատենները մենք առանձնացնում էինք երկու սեռերը, և այս կերպ ուժեղացնում էինք նոյն այն պակասութիւնները, որպիսիք յուսով էինք ուղղել։ Տարբերութիւն վարուեցողութեան մէջ անխուսափելի պէտք է լինի ինչպէս աշխատանքի այնպէս և խաղի միջոցին—տարբերութիւններ, համապատասխան ուրոյն հոգեկան և մարմնական կազմերի, սակայն այդ լիովին իրագործելի է առանց առանձնացման մեր պատանիների և աղջիկների յատկապէս կեանքի այն ժամին, երբ նրանց փոխ ազդեցութիւնը շատ աւելի օգտաւոր է։

Միացեալ ուսուցումը պէտք է ըստ հնարին անընդհատ լինի։ Այդ սիստեմը կարող է լրիւ փորձի ենթարկուել միայն այն դպրոցներում, ուր աշակերտ-աշակերտուհիները մտնում են երեխայութիւնից և մնում են յընթացս ուսման շրջանի ամենամեծ մասը։ Ահա թէ ինչու մենք այստեղ ընթերցողի ուշադրութիւնը

չենք հրաւիրում այնպիսի հիմնարկութեանց վրայ, օրինակ Beading Colleg-ը, որտեղ ուսանում են սահմանափակ ժամանակի ընթացքում տղայ ու աղջիկներ, ստանալով սկզբնական կրթութիւնը անջատ դպրոցներում։ Նման կոլեջները օգտաշատ են Անգլիայի շատ մասերում, բայց այնտեղ ուսանողները արդէն դուրս եկած են մանկական շրջանից, և նրանց հոգեկան ունակութիւնները արդէն որոշ աստիճան ձևակերպուած են։

Այդ սիստեմը լրիւ փորձի ենթարկելու համար պէտք է տղայ ու աղջիկ անմիջապէս, ընտանիքի միջավայրից մտնեն միացեալ ուսումնարանները առանց որևէ առանձնացումի ընդմիջման։ Մենք գլխաւոր ուշադրութիւն դարձնում ենք բնաւորութեան զարգացման, բարոյական յատկութիւնների ուռճացման վրայ, իսկ այդ բանին հասնել կարելի է միայն մանկութեան անմշակ տարիներում։

Կարգապահութեան խնդիրը չի ներկայացնում ոչ մի առանձին դժուարութիւն միատեղ ուսուցման դպրոցներում։ Այնտեղ, ուր գոյութիւն ունի դասարանական հսկման սիստեմը (prefectual), ինչպէս, օրինակ Ռէդվիքում, աղջիկները գտնում են իրենց հարազատ ընկերուհիների դասարանական հսկողութեան տակ, որոնք օգտւում են լրիւ իշխանութեամբ բոլոր նուազ կարևոր գործերում, և կարգը պահպանում է ամենանուազ ընդհարումներով։ Բայց նոյն իսկ այն դպրոցներում, որոնք չեն հետևում այդ մեթոդին, փորձն ապացուցում է, որ միատեղ ուսուցման ընթացքում դասատուների հոգսը զգալի չափով հեշտանում է։ Աղջիկները, հէնց իրենց բնոյթով, աւելի դիւրըմբռնող են քան տղաները, և նրանց օրինակը գեղեցիկ ազդեցութիւն է ունենում տղաների վրայ։ Դիմենք նորէն Ռէդվիքեան համալսարանի տեսուչ դ-ր Վայլփոյլի հաշուէտուութեանը.—«Անվիճելի է, ասում է նա, որ աղջիկների ու վարժուհիների ներկայութիւնը ունի մեծ ազդեցութիւն, որն ամեն տեղ զգալի է։ Տղաների մէջ նկատւում է մեծ հեզութիւն և քաղաքավարութիւն, ինչպէս ուսման ժամերին այնպէս և խաղերին, որը չի կարելի չվերագրել միատեղ ուսման ազդեցութեանը»։

Ուսուցչական խմբի կազմը, միատեղ ուսուցման դպրոցներում, պէտք է բաղկացած լինի մօտաւորապէս համաքանակ՝ վարժապետներից և վարժուհիներից։ Շատ դպրոցներում մենք հէնց դրան էլ հանդիպում ենք, և եթէ այդ դեռ պակասում է բոլոր դպրոցներում, պատճառն այն է, որ լաւ զարգացած վարժուհիների թիւը դեռ շատ սահմանափակ է։ Սակայն այդպիսի վարժուհիներ որոնելու դժուարութիւնը աստիճանաբար չքանում է, այն չափով, որքան կնոջ դաստիարակումը դառնում է աւելի ու աւելի գործնական և մեթոդիք։

Միատեղ ուսման ոչ մի դպրոց չի կարող, իրապէս, եօլայ գնալ առանց շարժական խաղեր ու մարմնամարզութիւն գիտցող և առհասարակ ֆիզիքական զարգացման մասնագէտ վարժուհու օգնութեան, որը ոչ միայն ուսուցանելու է աղջիկներին, նրանց սեռին յատուկ մարմնամարզական վարժութիւններ, այլ և պատասխանատու է նրանց ֆիզիքական բարեկեցութեանը։ Չի կարելի ժխտել այն փաստը, որ աղջիկները խիստ հակամէտ են ի չարը գործ դնելու իրենց ոյժերը ինչպէս խաղամիջոցներին, այնպէս էլ մարմնամարզական վարժութիւններին, և բարեխիղճ վարժուհին, մի քանի բժշկական տեղեկութիւնների գիտակ, շատ աւելի պէտք է նրանց, քան թէ նրանց աւելի ուժեղ եղբայրներին։ Նախապաշարմանց մի նշանաւոր մասը, որ տիրում է որոշ խաւերում, կանխակարծիքներ, որոնք բացասում են կանանց համար բացօդեայ մրցախաղերի (спортъ) օգտակարութիւնը, հիմնուած են այն ինքնակար հետևանքների վրայ, որոնք յաճախ յառաջ են գալիս իբրև հետևանք այդ նախազգութիւններն անտես առնելուն։

Սոքա են գլխաւոր ընդհանուր գծերը, հիմնադրած մեր միջնակարգ միատեղ ուսման դպրոցներում, թէպէտ նման դպրոցները դեռ քիչ են, բայց նրանց թիւը արագ աճում է, այն չափով, որքան այդ սիստեմի յաջողութիւնը դառնում է աւելի ու աւելի անվիճելի, և նրա առաւելութիւնները շատ ակնբախ։ Մինչև անգամ մեր (Անգլիայի) աւելի հնագոյն և նշանաւոր համայնական դրպրոցները սկսել են բարեհաճ վերաբերուել դէպի նոր շարժումը և Վինչեստերեան կոլլեջի նշանաւոր տեսուչներից մէկը, քառասնամեայ ծառայութենէն վերջը հանգստեան դուրս գալով, իւր հրաժեշտի ճառի մէջ իրեն կողմնակից յայտարարեց միացեալ ուսման նորագոյն սիստեմին։

փոխադր. Երուանդ Բահ. Նալբանդեան.

(Կշարունակուի)